# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

NATHAN J. HOCHMAN
ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

da.lacounty.gov @LADAOffice @LACountyDA

## Ո՞Վ Է ՊԱՐՏԱՎՈՐ ԶԵԿՈՒՑԵԼ

Այն անձինք, ովքեր շփվում են երեխաների հետ կամ պատասխանատու են նրանց խնամքի և հսկողության համար, ըստ նահանգային օրենքի, պարտավոր են զեկուցել ակնհայտ կամ կասկածելի բռնության ենթարկված և անուշադրության մատնված երեխայի մասին:

Յուրաքանչյուր պարտադիր զեկուցող անհատապես պատասխանատու է օրենքին հետևելու համար: Այնուամենայնիվ, եթե երկու կամ ավել պարտադիր զեկուցողներ տեղեկանան երեխայի հանդեպ կասկածելի բռնության մասին, ըստ համաձայնագրի, նրանք կարող են ընտրել նրանցից մեկհոգու, ով կզեկուցի դրա մասին:

Համաձայն օրենքի, բռնության մասին չզեկուցելը զանցանք է, որը պատժվում է մինչև վեց ամիս ազատազրկմամբ, և/կամ տուգանվում 1000 ԱՄՆ դոլարի չափով: Դա կարող է նաև հանգեցնել մասնագիտական լիցենզիայի կամ հավատարմագրի զրկման:

### Նահանգային օրենքով սահմանված պարտադիր զեկուցողների զբաղեցրած պաշտոններն են՝ :

- Ուսուցիչ, ուսուցչի օգնական, ուսուցչի ասիստենտ, ուսումնական օգնական
- Դպրոցի ադմինիստրատոր/ վարչական աշխատող, դպրոցի տնօրեն, տնօրենի օգնական, դպրոցի դեկան, դպրոց հաճախելու և/կամ երեխաների բարեկեցության վերահսկիչ, աշակերտական կազմի վկայագրված աշխատակից, հանրակրթական դպրոցի դասակարգված աշխատակից, երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման դպրոցական ծրագրի ադմինիստրատոր կամ աշխատակից, սպորտային մարզիչ, մարզչի օգնական կամ շրջանավարտ օգնական, որը ներգրավված է պետական կամ մասնավոր հետմիջնակարգ ուսումնական հաստատություններում մարզչական աշխատանքում, սպորտային ադմինիստրատոր կամ տնօրեն, որն աշխատում է որևէ պետական կամ մասնավոր դպրոցում
- Կալիֆորնիայի Կրթության Դեպարտամենտի կամ շրջանի կրթության գրասենյակի աշխատակից, որի պարտականությունները ներառում են կանոնավոր շփում երեխաների հետ
- Բժիշկ, բժշկական օրդինատոր կամ ստաժոր; ոտնաբույժ, վիրաբույժ, դատաքննիչ, բժշկական քննիչ, հեքիմ, օպտոմետրիստ, լիցենզավորված բուժքույր, ատամնաբույժ, ատամնաբուժական հիգիենիստ, նահանգի կամ շրջանի հանրային առողջապահության աշխատակից, ով բուժում է անչափահասին վեներական հիվանդության կամ որևէ այլ հիվանդության դեմ
- Կլինիկական սոցիալական աշխատող, ամուսնության, ընտանիքի և երեխաների թերապևտ/խորհրդատու, ներառյալ պրակտիկանտները և վերապատրաստվողները, հոգեբույժ, հոգեբան, գրանցված հոգեբանի օգնական կամ ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման գծով խորհրդատու
- Երեխաների խնամքի հաստատության աշխատակից, ներառյալ բնակարանային խնամքի և խմբային տան անձնակազմը, ցերեկային ճամբարի ադմինիստրատոր, ցերեկային խնամքի և համայնքային խնամքի հաստատության աշխատակից, ադմինիստրատոր կամ լիցենզավորված աշխատող, խնամատար ծնող, Head Start ծրագրի ուսուցիչ, լիցենզավորման աշխատող կամ գնահատող, որն աշխատում է լիցենզավորող գործակալության կամ երիտասարդական կենտրոնի, երիտասարդական կազմակերպության կամ երիտասարդական հանգստի ծրագրի ադմինիստրատորի կամ աշխատակցի մոտ, կազմակերպության ադմինիստրատոր կամ աշխատող, որի պարտականությունները ներառում են երեխաների հետ անմիջական շփում և հսկողություն
- Երեխաների աջակցության գործակալության աշխատող կամ տեսուչ, երեխայի այցելությունների վերահսկիչ, շրջանի համար նպաստ տրամադրող աշխատակից, Դատարանի կողմից նշանակված հատուկ փաստաբան ծրագրի աշխատակից կամ կամավոր, տնային ծառայություններ մատուցող, հանրային աջակցության աշխատող, սոցիալական աշխատող
- Շրջանային դատախազության քննիչ, խաղաղության սպա, պայմանական վաղաժամկետ ազատման սպա, պրոբացիայի սպա, դպրոցի շրջանի ոստիկան կամ դպրոցի անվտանգության աշխատակից, ոստիկանության, շերիֆի կամ պրոբացիոն բաժնի ցանկացած աշխատակից
- Շտապ բուժօգնության տեխնիկ, հրշեջ (բացառությամբ կամավորի), բուժաշխատող
- Կենդանիների հսկողության աշխատակից, հումանիտար/ մարդասիրական հասարակության սպա
- Հոգևորականներ, այդ թվում՝ սպասավոր, քահանա, ռաբբի, կրոնական գործիչ կամ եկեղեցու, տաճարի կամ ճանաչված դավանանքի կամ կազմակերպության գործիչ, ցանկացած հոգևորականի համար գրառումների պահառու
- Կոմերցիոն ֆիլմի և լուսանկարչական տպագրության աշխատող, այդ թվում՝ իրենց աշխատակիցները
- Համակարգչային կոմերցիոն տեխնիկ

## Ինչպե՞ս Զեկուցել

### Քայլ 1.

Պարտադիր զեկուցողը, ով հիմնավոր կասկածներ ունի, որ երեխան ենթարկվել է բռնության կամ մատնվել անուշադրության, պետք է անմիջապես կամ հնարավորինս շուտ զանգահարի և զեկուցի դրա մասին :

«Ողջամիտ կասկած» նշանակում է, որ ողջամիտ անձը, հիմնվելով փորձի և/կամ վերապատրաստման վրա, կարող է կասկածել բռնության կամ անտեսման մասին՝ հիմնվելով դիտարկումների կամ առկա տեղեկատվության վրա:

Երեխայի հանդեպ կասկածելի բռնության և անուշադրության մատնելու մասին պետք է տեղեկացնել տեղական իրավապահ մարմիններին կամ զանգահարել Երեխաների Պաշտպանության Շուրջօրյա Թեժ Գիծ հետևյալ հեռախոսահամարով՝ **(800) 540-4000**

Հեռախոսային զեկուցումները պետք է ներառեն զեկուցողի անունը, երեխայի անունը և գտնվելու վայրը, և բռնության կամ պատճառած վնասվածքի բնույթն ու աստիճանը:

**Օգնել Հանցագործության Տուժվածներին Վերապրել**

**(800) 380-3811**

### Քայլ 2.

Հեռախոսային զեկույցից հետո, 36 ժամվա ընթացքում, պարտադիր զեկուցողը պետք է գրավոր ներկայացնի՝ Երեխայի Հանդեպ Կասկածելի Բռնության (Scar) Մասին Զեկույց՝ օգտագործելով Արդարադատության Դեպարտամենտի համապատասխան SS 8572 ձևաչափը:

Եթե իրավապահ մարմինը տեղեկացվել է բռնության մասին հեռախոսով, ապա գրավոր զեկույցը պետք փոստով ուղարկվի վերջինիս գործունեության վայր/հասցե:

Եթե հեռախոսային զեկույցն իրականացվել է թեժ գծի միջոցով, ապա գրավոր տարբերակը պետք է ուղարկվի՝ Երեխաների և Ընտանեկան Ծառայությունների Վարչություն էլեկտրոնային տարբերակով կամ փոստով:

SCAR-ի էլեկտրոնային տարբերակի և ցուցումների համար, կարող եք այցելել DCFS-ի կայք՝ **mandreptla.org**

SCAR-ի թղթային տարբերակը կարող եք փոստով ուղարկել. DCFS, 1933 S. Broadway, 5th Fl., Los Angeles, CA 90007

SCAR ձևերը հասանելի են հետևյալ հասցեներով.

- **oag.ca.gov/childabuse/forms**
- **mandatedreporterca.com**

## Ինչի՞ Մասին է Պետք Զեկուցել

Պարտադիր զեկուցողները պետք է զեկուցեն երեխայի (մինչև 18 տարեկան անձի) նկատմամբ հետևյալ ենթադրյալ հանցագործությունների մասին.

- Սեռական բռնություն – ներառում է պղծություն, սեռական ոտնձգություն, բռնաբարություն, ինցեստ կամ սեռական շահագործում
- Ֆիզիկական բռնություն – ներառում է երեխային դիտավորյալ վնասվածք պատճառելը, օրինակ՝ մարմնական պատիժը, որը հանգեցնում է կապտուկների, կտրվածքների, քերծվածքների, այրվածքների, կոտրվածքների կամ այլ տրավմատիկ վիճակների
- Անտեսում/Անուշադրության Մատնում - երբ խնամակալը չի տրամադրում՝ պատշաճ սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն կամ հսկողություն, որի արդյունքում երեխան համեմատաբար մեծ ռիսկի է ենթարկվում ծանր ֆիզիկական վնաս կամ հիվանդություն ունենալու: Այն չի ներառում ծնողի տնտեսական անհամապատասխանությունը:
- Էմոցիոնալ բռնություն – ներառում է դաժան վերաբերմունք, սպառնալիքներ, նվաստացում և զրկանք, որն առաջացնում է չարդարացված հոգեկան տառապանք
- Վտանգվածություն – ներառում է այն դեպքերը, երբ խնամակալը վտանգո ւմ կամ թույլ է տալիս, որ երեխայի անձն ու առողջությունը վտանգվի, նույնիսկ եթե իրական վնասվածք չի առաջանում

## Պաշտպանություն Պարտադիր Զեկուցողների Համար

Պարտադիր զեկուցողների գործատուները չեն կարող որևէ կերպ խոչընդոտել կամ խանգարել, ոչ էլ պատժել կամ աշխատանքից ազատել աշխատողին՝ բռնությունը զեկուցելու պատճառով:

Պարտադիր զեկուցողն ազատված է քաղաքացիական և քրեական պատասխանատվությունից կապված զեկուցի հետ, եթե նա գիտակցաբար կեղծ զեկույց չի ներկայացրել:

Եթե պարտադիր զեկուցողը ենթարկվի իրավական պատասխանատվության բռնությունը զեկուցելու համար, ապա պետությունը վերջինիս իրավական պաշտպանության ծախսերի համար կվոխհատուցի մինչև 50,000 ԱՄՆ դոլար:

նահանգային օրենքը միջոցներ ունի պաշտպանելու պարտադիր զեկուցողի ինքնության գաղտնիությունը: Այն կարող է բացահայտվել միայն որոշ լիազորված կողմերի, ներառյալ երեխաների պաշտպանության անձնակազմի և իրավապահ մարմինների համար: Եթե երեխաների նկատմամբ բռնության քրեական գործը քննվի, պարտադիր զեկուցողից կարող է պահանջվել վկայություն տալ դատարանում:

**ԶԵԿՈՒՑԵ՛Ք ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՏԵՍՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Երեխաների Պաշտպանության Թեժ Գիծ**

**(800) 540-4000**

*Անվճար է Կալիֆորնիայում*

**Կալիֆորնիայից դուրս**

**(213) 639-4500**

**TDD (Լսողության Խանգարումներ Ունեցողների Համար)**

**(800) 272-6699**

Սկանավորե՛ք այստեղ՝ դիտելու բոլոր բրոշյուրները առցանց: